

հետեւ անոնք մեր կամքէն կախում չունին՝ մեր ալ պատասխանատուութիւնը հրաւիրելու իրաւունք չունին:

Սըռ Ռ. Լոսըն դատը վաստկած է:

25 Յուլիս

Ամերիկացի բժիշկ մը, դօքթօր Թաննէր, բժշկական քննութիւն մը ընելու համար՝ քառասուն օր անօթի մնալու որոշում տուած է:

Այս բժիշկն այժմ քսանեօթ օր է, որ անօթի կը մնայ. Ամերիկայի ինչպէս նա եւ Եւրոպայի բոլոր լրագիրներն ահագին էջեր կը զոհեն այս մարդուն համար:

Չաթալճայի ամբօրթիւնները պահպանող օսմանեան զօրքերն անցեալները երեսունհինգ օր անօթի մնացած էին, եւ տեղական լրագիրներէն ոչ մին յօժարեցաւ երկու տող գրել. իսկ հիմայ, որ Ամերիկացի բժիշկ մը ասանկ փորձի մը ձեռք կգարնէ՝ աշխարհիս բոլոր լրագիրները իրենց էջերը գովեստով կը լեցունեն, մինչդեռ այդ գիտին փառքը Չաթալճայի զօրքերուն կը վերաբերի, այն զօրքերուն, որ երեսունհինգ օրէն աւելի չկարենալով դիմանալ՝ զենքերը կը թողուն, եղելութիւնը կ'իմացունեն եւ Օսման բաշայի անկումը կը պատճառեն:

Զօրքերն ալ մէկդի դնենք եւ դարձեալ պիտի տեսնենք, որ այս գիտը նոր բան մը չէ. մեր գրագէտներուն ամենէն հարուստը վարժուած է տասն օր անօթի մնալու:

Մարդս կ'ամչնայ ասանկ սովորական մէկ բառքը իբրեւ գիտ՝ լրագիրներու մէջ անցունելու...

**

Այսօր նորէն գումարուեցաւ ազգային երեսփոխանական ժողովը: Ս. Պատրիարքը բացակայ էր հիւանդութեանը պատճառաւ:

Վարչական կազմակերպութեան ծրագիրն նկատողութեան առնուելով՝ քուէի դրուեցաւ հետեւեալ իմաստով.

«Ով որ վարչութեան կազմակերպութեանը ստիպողականութիւնը կը ճանաչէ եւ յաջորդ նստին մէջ անոր վերջնական որոշումը կ'ուզէ՝ թող ձեռքը վեր վերցունէ»:

Մէկ մասը վեր առաւ իւր ձեռները: